ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Տ. ՕՇԱԿԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԻՒԼԳԻՒԼԵԱՆ
Իրաքի Հայոց թեմի առաջնորդ



Տ. Օշական եպիսկոպոս Գիւլգիւլեան (աւազանի անունը Գեւորգ) ծնուել է 1960 թ. յունիսի 18-ին Բէյրութում։

1971–1977 թթ. սովորել է Բէյրութի Վահան Թէքէեանի անուան վարժարանում։

1977–1979 թթ. ուսանել է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքում։

1979–1986 թթ. ուսանել է Էջմիածնի Գեւորգեան հոգեւոր ճեմարանում։

1986–1987 թթ. երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսի օրօք եղել է կաթողիկոսութեան քարտուղար։

1987 թ. փետրուարի 22-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Տ. Վազգէն արքեպիսկոպոս Քեշիշեանի ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ վերակոչուելով Տ. Օշական աբեղայ։

1987–1988 թթ. ծառայել է Կանադայի Բրիտանական Կոլումբիա նահանգի Վանկուվըր քաղաքում, որպէս հոգեւոր հովիւ։

1988 թ. պաշտպանել է «Աղթամարի կաթողիկոսութիւնը» վերտառութեամբ վարդապետական թեզ եւ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում Տ. Ներսէս արքեպիսկոպոս Պոզապալեանից ստացել մասնաւոր վարդապետութեան աստիճան։

1989–1990 թթ. ուսումը շարունակել է Շուէյցարիայի Ժնեւ քաղաքի եւ Նիւ Եորքի Կոլումբիայ համալսարանում։

1990–1993 թթ. ծառայել է ԱՄՆ Վիրջինիայ նահանգի Ռիչմօնդ քաղաքի Սուրբ Յակոբ եկեղեցում՝ իբրեւ հոգեւոր հովիւ, ապա ուսումը շարունակել Ռիչմօնդի Աստուածաբանական ճեմարանում եւ Վիրջինիայի համալսարանում։

1993 թ. նշանակուել է Նիւ Եօրքի Սուրբ Վարդան եկեղեցում՝ որպէս լուսարարապետ։

1994 թ. եղել է Ֆլօրիդայի Մայամի քաղաքի Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցու հոգեւոր հովիւ։

Մայամիում ծառայութեան ընթացքում ձեռնամուխ է եղել գործող վարձակալած շէնքի փոխարէն Հարաւային Ֆլորիդայիում նոր եկեղեցու կառուցման աշխատանքին, որի արդիւնքում 1995 թ. կառուցուել է Ֆլորիդայի Սուրբ Մարիամ եկեղեցին։

1997 թ. եղել է Մասաչուսէթս նահանգի Ջելմսֆորդ քաղաքի Սբց. Վարդանանց եկեղեցու հոգեւոր հովիւը։

2001 թ. գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինութեամբ ընտրուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի 1700-ամեակի յանձնախմբի անդամ։

2002 թ. օժանդակել է Միացեալ Նահանգների Արեւելեան թեմի Նիւ Եօրքի զարգացման գրասենեակին, եւ իբրեւ այցելու հովիւ՝ ծառայել թեմի եկեղեցիներում։

2003 թ. Ինդիանայ նահանգի «Երրորդութիւն» աստուածաբանութեան ճեմարանում ստացել է Աստուածաբանութեան մագիստրոսի կոչում եւ կրօնական ուսուցման իրաւունքի վկայական։

2003–2009 թթ. նշանակուել է Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Սուրբ Նազարէթ եկեղեցու հովիւ, իսկ 2005-ին Հնդկաստանի հայկական բոլոր եկեղեցիների հովուութեան՝ համատեղութեամբ ստանձնել Հայկական մարդասիրական ճեմարանի կառավարիչի պարտականութիւնը։ Պաշտօնավարման ընթացքում հիմնովին վերանորոգել է Պանկալի նահանգի բոլոր հայկական եկեղեցիները, Հայոց մարդասիրական ճեմարանի եւ Դաւիթեան աղջիկների դպրոցի շէնքերը։

2009–2022 թթ. նշանակուել է ԱՄՆ Փենսիլվէնիա նահանգի Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ եկեղեցու հովիւ։

2022 թ. մայիսի 13-ին ընտրուել է Իրաքի Հայոց թեմի առաջնորդ։

2023 թ. հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրուել է եպիսկոպոս։